# Օպերատիվ շտաբի կողմից հետագա դրական ընթացք ստացած բիզնես ծրագրերի մասին ամփոփ տեղեկատվություն

1. **«Մէգա Արարատ» ՓԲԸ. «Թեյի արտադրության գործարար ծրագիր»**

Ընկերությունը սկսել է արտադրությունը 2008թ.-ից (58 500 տուփ թեյ) և գտնվում է Վայքից 10 կմ հեռավորության վրա և արդեն իսկ արտադրում է տարբեր տեսակի հայկական խոտաբույսերից, ինչպես նաև սև ու կանաչ թեյեր՝ արտադրված պարկերի մեջ: Ընկերությունը այսօր գովազդում է իր արտադրանքը Հայկական Հեռուստատեսությամբ, տրամադրելով 1 800 000 ՀՀ դրամ ամսական գումար արտադրանքի խթանման համար: Արտադրանքի 90%-ը սպառվում է ռուսական շուկայում: Սակայն այդ շուկայում կայուն դիրք ձեռք բերելու նպատակով ընկերությանը անհրաժեշտ է ընդլայնել արտադրության ծավալները, ինչը հնարավորություն կտա արտադրել տարեկան մեկ միլիոն տուփ թեյի արտադրանք և ապապահովել 46 նոր աշխատատեղ: Այդ նպատակով ընկերությանն անհրաժեշտ են 161 մլն ՀՀ դրամ ներդրում (4 հատ էլ թեյի փաթեթավորման սարքեր՝ 4 հատ DXDC 15 Թեյի փաթեթավորման ավտոմատ մեքենա, և հումք ձեռք բերելու համար) 4 տարի ետգնման ժամկետով:

*Մանրամասնությունները կարող եք գտնել ՀՀ կառավարության պաշտոնական վեբ կայքից: www.gov.am/Տեղեկատվական կենտրոն/Պաշտոնական լրահոս/05.02.2009թ. ՀՀ կառավարության նիստ:*

2. **«Թամարա Ֆրութ» ՓԲԸ. «Արտադրության առողջացման, վերակառուցման նպատակով վերաֆինանսավորման և շրջանառու կապիտալի համալրման գործարար ծրագիր»**

Ընկերությունը ստեղծվել 2001թ.-ին գտնվում է Արագածոտնի մարզի Կարբի գյուղում և զբաղվում է մրգեր, հատապտուղների և բանջարեղենի խորը սառեցված արտադրանքի արտադրությամբ: Ստեղծվել է "Աշտարակի պահածոներ գործարանի բազայի վրա: Ընկերությունը իր արտադրանքը մեծամասամբ արտահանում է (83%): Ակնկալվող աջակցության չափը՝ 900 մլն ՀՀ դրամի վարկային միջոցներ և 300 մլն ՀՀ

դրամի դրամաշնորհ օրգանական արտադրանքը զարգացնելու նպատակով, քանի որ օրգանիկ արտադրանքը ունի մեծ պահանջարկ արտաքին շուկաներում: 300 մլն ՀՀ դրամի դրամաշնորհից 50 մլն ՀՀ դրամը ուղղվում է ընկերության 25 հա օրգանիկ այգիներում ներդրումներին, մշակմանը և ընդլայնմանը ևս 8 հեկտարով, 250 մլն ՀՀ դրամը ուղղվում է ընդհանուր 100 հա հեկտար հողատարածքով համատեղ օրգանիկ այգիների և պլանտացիաների ստեղծմանը: Միևնույն ժամանակ ընկերությունը պարտավորվում է Ընկերության շահույթից և փայատերերի սեփական միջոցներից 2010թ. ներդնել 80 մլն ՀՀ դրամ և ստեղծել 40 հա օրգանիկ այգիներ իսկ 2011թ ներդնել 120 մլն ՀՀ դրամ և ստեղծել 60 հա օրգանիկ այգիներ և պլանտացիաներ: Ծրագրում նախատեսվում է 2009-2012թթ ընթացքում ընկերության միջոցներով մասնագետների պատրաստում և վերապատրաստում օրգանիկ հումքի աճեցման, օրգանիկ արտադրանքի արտադրության ուսուցման կուրսերի կազմակերպման միջոցով: Ընկերությունը ունի սերտիֆիկատներ արտադրանքը եվրոպական շուկայում իրացնելու համար: Ընկերությունը ներկայումս ունի 16 հա ծիրանի, դեղձի և խալի օրգանիկ այգիներ, որոնցից ստացվող բերքի ծավալները 2011թ հետո կհասնեն տարեկան շուրջ 200 տոննայի:

*Մանրամասնությունները կարող եք գտնել ՀՀ կառավարության պաշտոնական վեբ կայքից: www.gov.am/Տեղեկատվական կենտրոն/Պաշտոնական լրահոս/12.02.2009թ. ՀՀ կառավարության նիստ:*

3. «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ. «Զարգացման ծրագիր»

«ՎԿՍ Արմենի» ՍՊԸ-ն մտնում է Գերմանական «WKS Textile Solutions» խմբի մեջ: Հիմնադրվել է 2007թ.-ի նոյեմբերի 26-ին Վանաձոր քաղաքում: Խումբը գործունեություն է ծավալում Եվրոպական մի շարք երկրներում՝ Գերմանիայում, Իտալիայում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլն: Հայաստանում ընկերությունը կարի արտադրություն է իրականացնում առայժմ Երևան և Վանաձոր քաղաքներում, որտեղ աշխատաքնով են ապահովում մոտ 700 մարդ: Ներկա դրությամբ «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ն ունի պայմանագիր գերմանական «Եվրոդրեսս»ՍՊԸ-ի հետ մինչև 30.04.2011թ կարի ծառայություն իրականացնելու համար: Իսկ թուրքական «Միքսոնս Տեքստիլ» ՍՊԸ-ի հետ «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ն ունի մեքենա-սարքավորումներին այլ պարագաների տրամադրման պայմանագիր: Նշված մեքենա-սարքավորումները և արտադրությանն անհրաժեշտ այլ պարագաները թվով 161 հատ ժամանակավոր ներմուծում մաքսային ռեժիմի ժամկետը լրացել և լրանում է ըստ ներկրման

ժամանակացույցի 27.11.2008թ.-ից 12.11.2009թ. Ընկերությունը ունի ռազմավարական (ստրատեգիական) ծրագիր՝ Հայաստանում երկարատև 10 տարի ժամանակով գործունեություն ծավալելու տարբեր քաղաքներում և մարզերում (երևան, Վանաձոր, Գյումրի, Կապան, Չարենցավան, Տաշիր, Տավուշ և այլն), որտեղ պետք է աշխատեն միջև 10000մարդ: Նշված ծրագիրը նպատակ ունի լուծելու աշխատանքի զբաղվածության, սոցիալական, արտադրական, առևտրային, գյուղատնտեսական և այլ հարցեր: «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ի ծրագրերի իրականացման համար ընկերությունը ֆինանսական օգնություն չի ակնկալում, սակայն հայցում է պետությանը տրամադրել այլընտրանքային օգնություն՝ ներկայացված «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ն 2007-2011թթ. ռազմավարական ծրագրի իրագործման համար արտասահմանյան գործընկերի կողմից ընկերությանը տրամադրված անհատույց ժամանակավոր օգտագործման տրված մեքենա-սարքավորումների «Ժամանակավոր ներմուծում վերաարտահանման համար» մաքսային ռեժիմի մինչև մեկ տարի վերաարտահանման ժամկետը մինչև մեկ տարի սահմանված ժամկետից երկարացնել մինչև «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ի մատակարարների հետ կնքված պայմանագրերի ավարտը:

*Մանրամասնությունները կարող եք գտնել ՀՀ կառավարության պաշտոնական վեբ կայքից: www.gov.am/Տեղեկատվական կենտրոն/Պաշտոնական լրահոս/12.02.2009թ. ՀՀ կառավարության նիստ:*

4. «**Սորսիո**». «**SS համակարգերի, ցանցերի և կառավարման ծրագրային միջոցներ**»

Սորսիոն ստեղծվել է 2005թ. Լայքս Հայաստանի անձնակազմի հիման վրա Լայքսի գլխավոր տնօրեն Հովհաննես Ավոյանի, Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի և USAID-ի աջակցությամբ և համաֆինանսավորմամբ: 2005 թվականից Սորսիոն ստեղծել և շահագործման է հանձնել SS համակարգերի և ցանցերի ղեկավարման փաթեթներ: Հաջող գործունեության արդյունքում Սորսիոն բազմաթիվ պատվիրատուներ է ձեռք բերել: Ստեղծվել են գործիքներ Mon.itor.Us և Monitis ապրանքանիշներով, որոնք մինչ այսօր ունեն բազմաթիվ հաճախորդներ: Սորսիոն զարգացնում է եղած ծրագրային գործիքները և SS ոլորտում ստեղծում համակարգերի ղեկավարման այլ գործիքներ: Սորսիոն ունի մոտ 50 աշխատակիցներ, և հիմնական արտադրանքը մշակվել է 3 տարիների ընթացքում 10-15 բարձրորակ ծրագրավորողների թիմի կողմից: Սորսիոն խորհրդատվությունից ստացած իր շահույթը ներդնում է արտադրանքի մշակման/զարգացման վրա: Հաշվարկված է, որ

լրացուցիչ 125 մլն դրամ ներդնելուց հետո կանխատեսվող վաճառքները 2009, 2010 և 2011թթ կտրուկ աճ կգրանցեն: Հաճախորդների մեծամասնությունը ԱՄՆ-ից և Եվրոպայից է, կան նաև օգտագործողներ Ավստրալիայից, Բրազիլիայից և այլ երկրներից: Սորսիոյի պատվիրատուները հանրահայտ ընկերություններ են, որոնցից են՝ Oracle-ը, T-Mobile-ը, KTelecom-ը, Accenture-ը, Lycos-ը, UMGI-ը և այլ ընկերություններ: Ծրագրային միջոցները վաճառվում և սպասարկվում են օնլայն եղանակով: Ծրագրի զարգացման արդյունքում նախատեսվում է լրացուցիչ 200 նոր բարձր վարձատրվող աշխատատեղ բացել մոտակա 2 տարիների ընթացքում:

*Մանրամասնությունները կարող եք գտնել ՀՀ կառավարության պաշտոնական վեբ կայքից: www.gov.am/Տեղեկատվական կենտրոն/Պաշտոնական լրահոս/19.02.2009թ. ՀՀ կառավարության նիստ:*

5. **«Տարոն» ԲԲԸ. «Տրիկոտաժի և կարի արտադրության հիմնում»**

ՏԱՐՈՆ ԲԲԸ-ն հանդիսանում է ՏԱՐՈՆ ՓԲԸ-ի (Եղեգնաձորի տրիկոտաժի արտադրական միավորում) իրավահաջորդը: 1997թ.-ին ընկերությունը մասնավորեցվեց և վերագրանցվեց որպես բաց բաժնետիրական ընկերություն: Ֆաբրիկան մասնավորեցվեց ֆաբրիկայի աշխատակիցների կողմից, ներկայումս ընկերության բաժնետերերը 330-ն են, որոնցից 90%-ը կանայք են: 1997թ.-ից ի վեր ընկերությունը արտադրանք չի թողարկել ինչը պայմանավորված էր ֆինանսական միջոցների բացակայությամբ: Ընկերության նպատակն է վերագործարկել տրիկոտաժեղենի, ինչպես նաև կարի արտադրությունը Եղեգնաձորի տրիկոտաժի ֆաբրիկայում՝ առաջարկելով նորագույն տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ստացված բարձրորակ տրիկոտաժի արտադրանք ներքին և միջազգային շուկաների համար, ինչպես նաև առաջարկել այլ կտորի տեսակներից արտահագուստի լայն տեսականի ներքին շուկայի համար: Տրիկոտաժե և կտորից հագուստի արտադրության վերագործարկման նախագծի իրականացման համար անհրաժեշտ կլինի 170 140 000 ՀՀ դրամի ներդրում իրականացնել 2009թ.-ին, որի 78%-ը կուղվի հիմնական միջոցների ձեռք բերմանը և տեխնոլոգիայի ներդրմանը, 18%-ը՝ հումքի ձեռք բերմանը, իսկ 4 %-ը՝ որակի կառավարման համակարգի ներդրմանը և շուկա մուտք գործելուն: Տրիկոտաժի և կարի արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ կլինի ներգրավել 35 աշխատակից, որոնցից 8-ը կհանդիսանան ադմինիստրատիվ աշխատողներ, իսկ մնացած 27-ը՝ արտադրական աշխատակիցներ (բանվորներ, օպերատորներ և այլն): Նախագծի 5-րդ տարում

(2013թ.) ընկերությունում զբաղված կլինեն 80 աշխատակից, որոնցից 70-ը՝ արտադրական աշխատակիցներ, իսկ մնացած 10-ը՝ ադմինիստրատիվ պաշտոններում:

*Մանրամասնությունները կարող եք գտնել ՀՀ կառավարության պաշտոնական վեբ կայքից: www.gov.am/Տեղեկատվական կենտրոն/Պաշտոնական լրահոս/12.02.2009թ. ՀՀ կառավարության նիստ:*

6. **«Վայք գրուպ» ՓԲԸ. «Գինու արտադրության ընդլայնման գործարար ծրագիր»**

«ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ը ստեղծվել է 03 մարտի 2000 թվականին՝ Վայք քաղաքում: Ընկերությունը արտադրում է գինիներ, պատրաստում ծիրանի չիր, արտահանում ծիրան, կատարում շինարարական աշխատանքներ: Ընկերությունն ունի ավելի քան 80 հա այգի, որցից 46 հա ծիրանի, 23 հա ”Արենի” տեսակի խաղող, 4 հա կեռասի, 2 հա դեղձի: 2001 թվականին սկսվել է գինու արտադրությունը 317 քառակուսի մետր արտադրական տարածքով և 400 մետր քառակուսի մառանով: Կազմակերպությունն ունի չրանոց 3 օրում՝ 3,5 տոննա արտադրողականությունով, ունի սառնարանային տնտեսություն 72 քառակուսի մետր տարածքով և պահեստ 144 քառակուսի մետր: Ներդրումներից հետո ընկերությունը ցանկություն ունի արտահանել առաջին տարվա ընթացքում 90000կգ թարմ ծիրան: Ընդլայնելով գինու արտադրությունը ընկերությունը 2013 թվականին կարտադրի 172 000 շիշ գինի, որի 80 տոկոսը կիրացնի Ռուսական շուկայում, 20 տոկոսը ներքին շուկայում: Կարտադրի 45 տոննա չիր, և կարտահանի 216 տոննա թարմ ծիրան: Ընկերությունը կավելացնի իր աշխատակիցների քանակը հասցնելով 146-ի (ներկայիս դրությամբ աշխատողներիփ թիվը կազմում է 27 հոգի): Նախագծով ենթադրվող կապիտալ աջակցությունը կազմում է 164 մլն ՀՀ դրամ:

Սույն թվականի փետրվարի 6-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին բանակցել «Վայք Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ կանոնադրական կապիտալում պետության մասնակցության մեխանիզմների հարցի շուրջ:

Բանակցությունների արդյունքում կողմերը համաձայնության էկան աջակցության վարկավորման տարբերակի շուրջ: Ներկայումս ընկերությունը ՓՄՁ ԶԱԿ-ի օժանդակությամբ արդեն իսկ ներգրավել է պահանջվող ռեսուրսները՝164 մլն. դրամ:

7. **«Կոնսեր» ՍՊԸ. «Պահածոների արտադրություն հիմնելու ներդրումային ծրագիր»**

Ընկերությունը գտնվում է ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածնում: «Կոնսեր» ՍՊԸ-ն նախատեսում է հիմնել պահածոների արտադրություն, որն իրականացվելու է «Անգա» ՍՊԸ –ի հետ համատեղ: Ընկերությունը նախատեսում է տարեցտարի նորույթ պահածոոլացված ապրանքներ առաջարկել՝ պարգևատրել սպառողներին մշտապես հետաքրքիր առաջարկներով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կապիտալում ներդրումը կազմում է մոտ 582 մլն ՀՀ դրամ, ինչը կապահովի 43%-ի կապիտալի պահանջ: 2008թ-ի ընթացքում Ընկերությունը պահածոների փորձնական արտադրություն է կազմակերպել և իրականացրել համտեսներ և փորձանմուշներ տրամադրել՝ սպառողների նախապատվությունները ուսումնասիրելու նպատակով: Նորույթ ապրանքների արտադրությանը մեծապես կնպաստի արտադրական նոր հոսքագծերի ձեռք բերումը, արտադրական տարածքների կապիտալ նորոգումը, սանիտարահիգենիկ պայմանների բարելավումը, որոնք մեծ հնարավորություն կընձեռեն եվրոպական երկներ արտահանելու համար: Ընկերությունը այժմ կարող է իրականացնել մոտ 20 տեսակի պահածոների արտադրություն՝ շնորհիվ բարձր որակավորում ունեցող մասնագետների և ձեռք բերվող սարքավորումների: Ներկայումս Ընկերությունն արտադրանքի իրացման համապատասխան պայմանագրեր ունի, մասնավորապես ԱՄՆ-ում գործող “Մաժեստիկ” ՍՊԸ-ի հետ, որը նախկինում ձեռք է բերել գործարանի արտադրանքը և իրացրել ԱՄՆ-ում, այժմ էլ այն ցանկանում է վերականգնել: Պահածոների արտադրությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կլինի ներգրավել մոտ 250 աշխատող, իսկ արտադրական պրոցեսների ընթացքում Ընկերությունը կհամագործակցի է մոտ 400 գյուղացիական տնտեսությունների /Էջմիածնի, Արարատի, Արմավիրի և այլնի/ հետ, որոնցում զբաղված կլինեն մոտ 2000 գյուղացիներ: Նշված գյուղացիական տնտեսությունների հետ առկա են նախնական պայմանավորվածություններ՝ բերքը մթերելու վերաբերյալ:

Սույն թվականի փետրվարի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին գնահատել ներկայացված ծրագիրը և նպատակահարմարության դեպքում՝ ՓՄՁ ԶԱԿ-ի հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել «Կոնսեր» ՍՊԸ-ին:

Ներկայումս ընկերությանը ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ տրամադրվել է 395 մլն. դրամ վարկային ռեսուրսներ:

8. **«Դայկալատ» ՍՊԸ. «Կաթի մթերման և վերամշակման ծրագիր»**

Ձեռնարկությունը գտնվում է Ստեփանավան քաղաքում: Ընկերությունը վարձակալել է կաթի վերամշակման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով և հարմարություններով տարածք անխափան գործունեություն սկսելու համար: Գործարանի ներկայիս հզորությունը թույլ է տալիս 20-25 տոննա կաթ վերամշակելու մեկ հերթափոխի ընթացքում (8 ժամ): Ստեփանավանի շրջանում հնարավոր է մթերել օրական 40-50 տոննա կաթ: Ձեռնարկությունում առկա են կաթի ստուգման լաբորատորիա, ինչպես նաև փաթեթավորումը և վերջնական ձևավորումը իրականացնող բոլոր սարքավորումները: Ձեռնարկության ակնկալվող աջակցությունը ենթադրում է գործարանի մեկնարկային փուլը սկսել, որից հետո գործարանը, որը ավանդական, բայց արդյունավետ տեխնոլոգիաներով կաթի փոշի և կարագ է արտադրելու, կկարողանա ինքն իր հաշվին ապահովել անխափան ցիկլի համար միջոցներ: Ընկերությանը անհրաժեշտ են 45 մլն ՀՀ դրամի չափով երկարաժամկետ վարկային միջոցներ ցածր տոկոսադրույքով՝ գործունեությունը սկսելու համար: Վարկային միջոցների տրամադրման անհնարինության դեպքում ձեռնարկությունը համաձայն է կապիտալում մասնակցությամբ պետական աջակցության տարբերակին: Ծրագրի առավելությունն կայանում է նրանում, որ կաթն մթերվելու է հումքի աղբյուրի մոտ, ինչի պատճառով չեն փոխվի կաթի ֆիզիկո-քիմիական հատկությունները: Ծրագրի իրագործման արդյունքում կստեղծվի նաև 50-55 նոր աշխատատեղ, ինչպես նաև կխթանվի մոտ 400 անասնապահական անհատ ձեռներեցների գործը:

Սույն թվականի փետրվարի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին լրացուցիչ ուսումնասիրել ներկայացված ծրագիրը և Օպերատիվ շտաբ ներկայացնել համապատասխան եզրակացություն:

Ուսումնասիրության արդյունքում ծրագիրը հավանության արժանացավ և ընկերությունը ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ արդեն իսկ ներգրավել է 110 հազ. ԱՄՆ դոլար վարկային միջոցներ:

9. **«Մեղրու պահածոների գործարան» ԲԲԸ. «Պահածոների արտադրության ընդլայնման ներդրումային ծրագիր»**

Մեղրու պահածոների գործարան ԲԲԸ-ն արտադրում է յուրահատուկ համի և բարձր որակի ջեմեր, մուրաբաներ և հյութեր՝ նախատեսված ինչպես ՀՀ, այնպես էլ

արտասահմանյան երկրների շուկաների համար: Սկզբնական շրջանում վաճառքը իրականացվում էր միայն տեղական շուկայում, բայց 2001թ. ընկերությունը սկսեց արտադրանքը արտահանել Ուկրաինա, Ռուսաստանի Դաշնություն, Գերմանիա, Մերձբալթյան երկրներ, Իսրայել, ԱՄՆ: Ներկայումս Ընկերությունը օգտագործում է իր արտադրական հզորության 10-15%-ը, ինչի հետևանքով արտադրական պրոցեսում ներգրավված է ընդամենը 20 աշխատակից: Պահածոները արտադրվում են էկոլոգիապես մաքուր, բարձրորակ, թարմ հումքից: Բացարձակապես չեն օգտագործվում կոնսերվանտներ և քիմիական հավելումներ: Արտադրանքն ունի հայկական և ուկրաինական որակի հավաստագրեր: Հիմնվելով հումքի առկայության վրա՝ Մեղրու պահածոների գործարանը մտադիր է ընդլայնել իր արտադրանքի տեսականին, որպեսզի ներառի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում հարաճուն պահանջարկ վայելող և ավելի շահութաբեր արտադրանքներ՝ պտղահյութեր, մասնավորապես՝ նռան պարզեցված հյութ: Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով, ընկերությունը մտադիր է ներգրավել 114 միլիոն ՀՀ դրամի արտաքին ֆինանսավորում նռան պարզեցված հյութի արտադրական գծի էական բաղկացուցիչների՝ ֆիլտրի և շշալցան սարքավորման ձեռքբերման և սկզբնական տարում նուռ և այլ հումք ձեռք բերելու համար: Ընկերությունը նախատեսում է աշխատողների թվի աճ՝ 2009թ-ին մոտ 35 աշխատակից: Ընկերության հիմնական ջանքերը ուղղված են լինելու արտաքին շուկաներին, որոնցից առավել նպատակային են ԱՄՆ-ը, Ուկրաինան, Ֆրանսիան, այդ թվում ԱՄՆ՝ 30%, Ուկրաինա (25%) և Ֆրանսիա (14%):

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին գնահատել ներկայացված ծրագիրը և նպատակահարմարության դեպքում՝ ՓՄՁ ԶԱԿ-ի հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել «Մեղրու պահածոների գործարան» ԲԲԸ-ին:

Արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել պետության կողմից կանոնադրական կապիտալում 113.7 մլն. դրամի մասնակցության տարբերակի շուրջ: Ներկայումս ծրագրի աջակցության իրագործումն ընթացքի մեջ է:

10. **«Անի-Կաթ» ՓԲԸ. «Աղաջրային պանիրների արտադրություն»**

«ԱՆԻ-ԿԱԹ» ՓԲԸ-ն ստեղծվել է 1995 թվականին Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում: Ստեղծման պահից ընկերությունը զբաղվել է աղաջրային պանիրների՝

Լոռի, Չանախ, Բրինզա տեսակների արտադրությամբ և վաճառքով: Ընկերությունը դադարեցրել է պանրի արտադրությունը 1999 թվականին.այն չի գործում առ այսօր: Ընկերությունը նախատեսում խիստ մրցակցային շուկա ներթափանցել արդյունավետ արտադրությամբ պայմանավորված ցածր գնի, տեսականու առկայության և խթանման քաղաքականության միջոցով: Ընկերության տեսլականն է՝ ապահովել Շիրակի Մարզի և հարակից շրջանների, ինչպես նաև Երևան քաղաքի բնակչությանը թարմ և անարատ կաթից պատրաստված պանիրների բազմազան տեսակներով: Վերջինիս իրականացման նպատակով ընկերությունը պլանավորում է վերսկսել պանրի արտադրությունը 2009 թվականի գարնանը: Նախնական շրջանում (առաջիկա 5 տարվա ընթացքում) կազմակերպությունը պլանավորվում է արտադրել 3 աղաջրային պանիրների տեսակները՝Լոռի, Չանախ, Բրինզա: Ֆինանսական կանխատեսումների հիման վրա հաշվարկվել է, որ ծրագրի հաջող իրականացման համար անհրաժեշտ գումարն ընդհանուր առմամբ կազմում է 21 մլն. ՀՀ դրամ: Հիմնականում անհրաժեշտ աջակցության միջոցները ուղղվելու են հումքի և շրջանառու միջոցների ձեռքբերման և ընթացիկ ծախսերի վրա: Վարկի դիմաց գրավի առարկան հանդիսանում են «ԱՆԻ-ԿԱԹ» ՓԲԸ-ին պատկանող պանրագործարանի շենք-շինությունները, մեքենա-սարքավորումները և տրանսպորտային միջոցները: «ԱՆԻ-ԿԱԹ» ՓԲԸ -ի անձնակազմը բաղկացած է 10 հոգուց: Հումքը (կաթը) ձեռք է բերվելու Շիրակի մարզի 6 գյուղերից 25-40 մատակարարների միջոցով:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել «Անի-Կաթ» ՓԲԸ-ին

Արդյունքում ընկերությունը ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ կներգրավի 15 մլն. դրամ վարկային ռեսուրսներ: Ներկայումս ընթանում է ծրագրի իրագործման (օժանդակության տրամադրման) ավարտական փուլը:

11. **«Դիլիջան» հանքային ջրերի գործարան ՍՊԸ. «Հանքային ջրերի արտադրության ծրագիր»**

Նախագիծը իրենից ներկայացնում հանքային ջրերի արտադրության՝ ներառյալ հանքային ջրի շշալցման արդյունաբերական ծրագիր: Նախատեսվում է կառուցել ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա (սարքավորումները պետք է ձեռք բերվեն), 2-րդ հոսանքագծի, համապատասխան սառնարանային

համակարգերի, օժանդակ կառույցների ձեռքբերում և նյութերի ձեռք բերում: Կազմված է «Դիլիջան» հանքային ջրի գործարանի կորպորատիվ փաթեթը, որը ներկայացված է տպած: Նախագիծը գտնվում է գործարկման փուլում, կատարված են զգալի ներդրումներ, մասնավորապես՝ կատարված են շին. մոնտաժային աշխատանքները, կառուցված են արտադրական և վարչական նոր մասնաշենքեր, ձեռք է բերվել արտասահմանյան ժամանակակից շշալցման հոսքագիծ: Ծրագրի արժեքը կազմում է 1 800 000 000 ՀՀ դրամ: Նախագծի իրականացման արդյունքում կստեղծվեն 100-ից ավելի նոր աշխատատեղեր: Իրացման հետ կապված նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել Իրանի, ԱԵ-ի, Գերմանիայի և Ռուսաստանի հետ: Ներկայումս ընթանում են բանակցություններ տարբեր պետությունների համապատասխան առևտրային կազմակերպությունների հետ:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում առաջարկվել էր «Դիլիջան» հանքային ջրերի գործարան ՍՊԸ-ին համաձայնության գալ առևտրային բանկերի հետ համապատասխան ռեսուրսների ներգրավման հարցում, որի պարագայում ՀՀ կառավարությունը ընկերությանը կտրամադրի համապատասխան բանկային երաշխիքներ:

12. **«Ագրոսպասարկում» ԲԲԸ. «Տոհմային անասնապահության և կաթի արտադրության ընդլայնման ծրագիր»**

Ծրագրի նպատակն է առավելագույնս արդյունավետ օգտագործել կովկասյան գործ ցեղի մինչ օրս պահպանված ամենահաջողված նախիրի գենետիկական ներուժը, կատրելագործել այդ ցեղի տոհմային և մթերատու հատկանիշները և խթանել կաթի արտադրության ծավալները Երևան քաղաքի Շահումյանի շրջանում գտնվող «Ագրոսպասարկում» ԲԲԸ-ում: Ընկերությունը ծրագրել է 130 գլուխ շվից ցեղի տոհմային երինջների ձեռք բերում և կատարելագործել «կովկասյան գորշ» ցեղի տոհմային և մթերատու հատկանիշները: Դրանց համար նաև անհրաժեշտ են կոպիտ և խտացրած կերեր: Վարկային միջոցներով նաև կվերանորոգվի տիպային կովանոցը, ինչպես նաև կկառուցվի ժամանակին համապատասխան կաթի արտադրության սրահ: Ակնկալվող աջակցությունը կազմում է 290.8 մլն ՀՀ դրամ, ցածր տոկոսադրույքով, 5 տարի ժամկետով: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն լրացուցիչ 17 և ավելի նոր աշխատատեղեր: Ներկայումս ֆերմայում բուծվում են 350-400 կենդանի, որոնցից 200-ը՝ կաթնատու: Նախատեսվում է կենդանիների գլխաքանակը հասցնել մինչև 500: Սկսած 2010թ.-ից ընկերությունը

հնարավորություն կունենա ապահովելու տարեկան 150-170 տոհմային բարձր մթերատվությամբ կենդանիներ տեղական ֆերմերներին:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում առաջարկվել էր «Ագրոսպասարկում» ԲԲԸ-ին համաձայնության գալ առևտրային բանկերի հետ համապատասխան ռեսուրսների ներգրավման հարցում, որի պարագայում ՀՀ կառավարությունը ընկերությանը կտրամադրի համապատասխան բանկային երաշխիքներ:

Բանակցությունների արդյունքում ընկերությունը փոխհամաձայնության է եկել առևտրային բանկի հետ: Ներկայումս ընթացքի մեջ է ընկերությանը պետության կողմից 280 մլն. դրամին համարժեք եվրոյի բանկային երաշխիքի տրամադրման հարցը:

13. **«Մշակ» ՓԲԸ. «Մեխատրոնիկայի և 3D-Design արտադրատեխնոլոգիական կենտրոն»**

Ընկերությունը մեծ հաջողությամբ իրականացնում է ավտոմատ համակարգերի, մեքենաների և հաստոցների մեխատրոնային տեխնոլոգիաներով արտադրություն: Ընկերության արտադրանքի հիմնական առավելությունը կայանում է բարձր որակի և ցածր գնի համակցության շնորհիվ, որի արդյունքում ընկերության սարքավորումները եվրոպական անալոգներից մոտ 3 և ավելի անգամ ավելի էժան են դառնում: Ծրագրով նախատեսված է արտադրության ընդլայնում, որի համար առկա են ընկերության հաջողված փորձը թե արտադրության և թե մարքետինգային բնագավառներում, սեփական արտադրական և գրասենյակային տարածքների և սարքավորումների առկայությունը, արդեն իսկ մշակված և արտադրված արտադրանքների առկայությունը, մասնագիտացված աշխատակազմի առկայությունը, արտադրության համար անհրաժեշտ պայմանները: Հաջողված գործունեությունը ընդարձակելու նպատակով ընկերությանը անհրաժեշտ են վերացնել թույլ կողմերը, որոնք են՝ լիցենզիոն ծրագրային փաթեթների բացակայությունը, որոշակի ժամանակակից սարքավորումների բացակայությունը, արտադրական տարածքների ոչ բավարար քանակը սերիական արտադրությունը կազմակերպելու համար, մարքեթինգային, ենթակառուցվածքային և այլն կազմակերպչական օբյեկտիվ և սուբյեկտիվ թերություններ: Նախագծով ենթադրվում է արտադրության մեծացում ավելի քան 20 անգամ: Ծրագրի իրականացման համար

պահանջվում է 5 500 000 ԱՄՆ դոլարի չափով աջակցություն: Ծրագրով նախատեսվում է 120 նոր աշխատակիցների ընդունում, որոնցից 80-ը պետք է անցնեն նախնական վերապատրաստում: Ներկա դրությամբ աշխատակիցների քանակը կազմում է 55 հոգի:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում առաջարկվել է, որ եթե «Մշակ» ՓԲԸ-ին հաջողվի EBRD-ից կամ IFC-ից ծրագրի իրականացման համար անհրաժեշտ 10% և ավելի ֆինանսական միջոցներ ներգրավել, ապա ՀՀ կառավարությունը կօժանդակի ծրագրին մնացած գումարի չափով:

14. **«ԱրԱր-ՍԱՖ» ՍՊԸ. «Լեռնամետալուրգիական ձեռնարկությունների համար ռետինե դետալների արտադրություն»**

(Լուսակերտ գյուղ, Կոտայքի մարզ) Ներկայացված նախագիծը ներկա դրությամբ գործող է, սակայն ընդլայնման կարիք ունի՝ թափոնների վերամշակման գործընթացը սկսելու համար: 2005 թ.-ից սկսելով արտադրությունը ձեռք է բերվել պայմանավորվածություն Սյունիքի մարզի լեռնաարդյունաբերական ձեռնարկությունների հետ: Նախագիծը իր մեջ ներառում է արտադրական գիտարարություն, այսինքն այս պահին կա արտադրական ձեռնարկություն, որը ի վիճակի է արտադրել հատուկ դետալներ լեռնամետալուրգիական ձեռնարկությունների համար: Ընկերության գործարկման դեպքում այդ դետալները այլևս չեն ներկրվի Ռուսաստանից Թուրքիայից և այլ Եվրոպական երկրներից: «ԱրԱր-ՍԱՖ» ՍՊԸ-ի թողարկվող արտադրանքից հետագայում կարող են օգտվել նաև Թեղութի հանքավայրի ապագայում գործարվելուց հետո: Վերոնշյալ նույն արտադրության բազայի հիման վրա կարելի է հին անվադողերի ռետինե թափոններից, փոշիացված, աղացած ռետինից ստանալ ամենակարևորը՝ նոր ռետինային խառնուրդ և այն օգտագործել գործող արտադրությունում և ռետինոտեխնիկական իրերի մյուս արտադրություններում: Ռետինե թափոնների վերամշակումը լուծում է բնապահպանական այնպիսի մի պրոբլեմ, որն է հին դողերից ազատվելու հարցը: Ընկերությունը ակնկալում է 15-20 մլն ՀՀ դրամի աջացկություն: Ընկերության պատրաստի արտադրանքի սպառումը նախատեսվում է հանքարդյունաբերության ձեռնարկություններում, ինչպես նաև շինարարության և ճանապարհաշինության ոլորտներում: Նախատեսվում է արտադրանքը արտահանել նաև Վրաստան:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել «ԱրԱր-ՍԱՖ» ՍՊԸ-ին:

Արդյունքում ընկերությունը ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ կներգրավի 15 մլն. դրամ վարկային ռեսուրսներ: Ներկայումս ավարտական փուլում է ծրագրին օժանդակելու գործընթացը:

15. **«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ. «Պահածոների արտադրության ընդլայնման և զարգացման ծրագիր»**

Ընկերությունը կազմավորվել է 1996թ.-ին մինչ այդ գործող «Արտաշատի պահածոների գործարան», որը հիմնվել է 1961թ.-ին, պետական ձեռնարկության մասնավորեցման արդյունքում և հանդիսանում է այդ ձեռնարկության իրավահաջորդը: Տարեց տարի ընկերությունը մեծացրել է իր արտադրական հզորությունները: 2002թ.-ին շահագործման է հանձնվել տոմատի լցման բուլղարական հոսքագիծը, 2005-2006թթ.-ին գործարկվել է կանաչ ոլոռի պահածոոգացման արտադրությունը և ավտոմատ լցման հոսքագիծը, 2006թ.-ին շահագործման է հանձնվել նաեւ տոմատի մածուկի արտադրության «FBR-Elpo» ընկերության արտադրած նոր իտալական հոսքագիծը: 2007թ.-ին ներկրվել եւ շահագործման է հանձնվել նաեւ նույն ընկերության մրգային խտանյութերի արտադրության համար նախատեսված հոսքագիծը, որից ստացված արտադրանքը ամբողջության այդ տարվա ընթացքում արտահանվել է: 2007-2008թթ.-երի ընթացքում ձեռք է բերվել եւ գործարկվել է կետչուպի եւ մայոնեզի արտադրության հոսքագծերը, որոնց արտադրանքը ներկայումս տեղական շուկայում առաջատար դիրք է գրավում: Ընկերության արտադրանքի տեսականին ներառում է 50 անուն ապրանքներ: Որպեսզի ընդհանուր արտադրական պոտենցիալը լիովին օգտագործվի, ընկերությունը պլանավորում է ավելացնել տեղական շուկայի վրա հիմնված պատրաստի արտադրանքի՝ մրգային և բանջարեղենային պահածոների արտադրությունը, որի արդյունքում կավելացնի նաև տարվա ընթացքում մթերվող գյուղատնտեսական ապրանքների ծավալը. Արարատյան դաշտի մթերման ենթակա բանջարեղենի շուրջ 65%-ը կմթերվի ընկերության կողմից, նախորդ տարիների՝ 50% ցուցանիշի դիմաց: Ընդլայնման և զարգացման ծրագրի համար ընկերությանը անհրաժեշտ է ներգրավել 1.46 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: Ծրագրի իրականցման արդյունքում աշխատատեղերի թիվը կավելանա 412-ից (2008թ.) մինչև

590 աշխատող: Գյուղմթերքների մթերման ընդլայնման շնորհիվ կմեծանա նաև Արարատյան դաշտի և շրջակա տարածքների գյուղացիական տնտեսություններում զբաղվածների թիվը 20 %-ով՝ համեմատած առկա 4550 գյուղացիական տնտեսություն ցուցանիշի հետ:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում առաջարկվել էր «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին ակնկալվող ֆինանսական ռեսուրսների դիմաց ընկերության կանոնադրական կապիտալում 25 տոկոս պետության մասնակցություն:

Ներկայումս ընթանում է ընկերության հետ բանակցային գործընթացի վերջնական փուլը:

## 16. «Լիկվոր ՓԲԸ». «Նոր մասնաշենքի կառուցման, սարքավորումների վերազինման նախագիծ»

Ընկերությունը գտնվում է Երևանում, որի 45% բաժնետերն է հանդիսանում ՋՎԵԲ-ը Ընկերությունում լրիվ դրույքով աշխատում են 83 բարձրակարգ մասնագետներ, որոնցից զգալի մասն ունի գիտական կոչում դեղագործության, քիմիայի, բիոքիմիայի, կառավարման և ճարտարագիտության բնագավառներում: Ընկերությունն արտադրում է ներերակային (կաթիլային), ներարկման և ակնաբուժական ստերիլ դեղամիջոցներ: Ընկերության կողմից առաջարկվող դեղերի անվանացանկը պարունակում է 60 անուն դեղորայք, որոնք ընդգրկում են շուրջ 25 դեղագիտական խմբեր: Ընկերությունն ունի 15 բրենդավորված, 2 օրիգինալ արտադրանք: Հայաստանի արտոնագրային վարչությունում գրանցված են ընկերության 12 ապրանքանիշեր: Ընկերությունը պլանավորում է ընդլայնել իր արտադրանքի տեսականին: 2008 թվականի արդյունքներով Լիկվոր ՓԲԸ-ն Հայաստանում հանդիսանում է դեղարտադրության ոլորտի առաջնորդ՝ վաճառքի ծավալներով և արտահանման աշխարհագրությամբ: Ընկերությունը իր արտադրանքն արտահանում է ԱՊՀ շուկաներ: Ակնկալվող աջակցության մեծությունը կազմում է 2,400,000 ԱՄՆ դոլար կառուցելու համար նոր գործարան, որը կհամապատասխանի եվրոպական GMP ստանդարտների պահանջներին և թույլ կտա արտահանել արտադրանքը եվրոպական երկներ: Նոր գործարանի շահագործման արդյունքում սպասվում է աշխատողների թվի աճ մինչև 150 հոգի:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել «Լիկվոր ՓԲԸ»-ին:

Ներկայումս ավարտական փուլում է ծրագրին օժանդակելու գործընթացը:

17. **"Իդիլ-Տեքստիլ" ՍՊԸ. "Բամբակյա թելից տրիկոտաժի կտորեղենի արտադրություն"**

(ք. Սպիտակ, սեփականատեր Նեջարի Ջենիկլի) «Իդիլ-Տեքստիլ» ՍՊԸ-ն, ունենալով ժամանակակից մեքենա-սարքավորումներ, զբաղվելու է բամբակյա թելից տրիկոտաժի կտորեղենի արտադրությամբ: Արտադրությունն անվտանգ է շրջակա միջավայրի համար: Ընկերությունը վարձակալել է 3955.9 քմ արտադրական տարածք, արտերկրից ներկրվել, տեղադրվել և մոնտաժվել են անհրաժեշտ բոլոր մեքենա-սարքավորումները: Գործում են ջրի, գազի, էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգերը: Ընկերությունը որպես տրիկոտաժի կտորեղենի արտադրող ոլորտում միակն է իր արտադրական հզորություններով, մեքենա սարքավորումների կազմով, առաջատար տեխնոլոգիաների վրա հիմնված ռեսուրսներ, զարգացման և ընդլայնման լուրջ հնարավորություններով: Ընկերությունը մտադիր է ավելի մատչելի գներով հումք ձեռք բերել Թուրքմենիայի Հանրապետությունից: Հումքի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հումքի մատակարարների հետ դեռևս համաձայնագրեր չեն կնքվել: Ներկրել է շուրջ 600 միլիոն դրամի արժողությամբ մեքենա-սարքավորումներ, զգալի ծախսեր է կատարել արտերկրից տրանսպորտային փոխադրումների ջրի, գազի, էլեկտրաէներգիայի անցկացման մոնտաժային աշխատանքների, փորձարկումների վրա: Լուծվել են բնապահպանության հետ կապված հարցերը: Արտադրական գործունեությունը սկսելու համար անհրաժեշտ հումքի /բամբակյա թելի, լվացող և ներկող նյութերի/ ձեռք բերման համար անհրաժեշտ են դրամական միջոցներ 60-75 միլիոն դրամի չափով՝ ցածր տոկոսադրույքով վարկի տեսքով, 2 տարի մարման ժամկետով: Ընկերությունը դիմել է «Արդշինինվեստբանկ»-ին վարկի համար, սակայն մերժվել է գրավադրվող գույքի բացակայության պատճառով (արտադրական շենքը ՀԲ-ի վարկի միջոցով է ձեռք բերված): Ընկերությունը նախատեսում է սկսել արտադրությունը 60-70 աշխատողով՝ հետագայում հասցնելով աշխատատեղերի թիվը 150-ի: Ընկերության սեփականատեր Նեջարի Ջենիկլին մինչև ձեռնարկությունը՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելը արտադրանքը արտահանել է նաև ՌԴ և Ուկրաինայի Հանրապետության շուկաներ: Արտերկրից պահանջարկի առկայությունը պայմաններ է առաջադրում ընդլայնելու արտադրության ծավալները

և հանրապետությունում առկա պահանջարկը բավարարելուն զուգընթաց իրականացնել զգալի ծավալների արտահանում: Ընկերությունը ունի մի շարք բանավոր պայմանավորվածություններ տեղական և ռուսական շուկա արտադրանք արտահանելու համար՝ համապատասխանաբար 85 և 150 տոննա:

Սույն թվականի մարտի 13-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՀՀ էներգետիկայի նախարարությանն ուսումնասիրել ընկերության գործունեությունը և ներկայացված ծրագիրը ու տալ եզրակացություն: ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարվել էր մեկ անգամ ևս բանակցել ընկերության ղեկավարության հետ ծրագրի մանրամասնություններ ճշտելու նպատակով:

Սույն թվականի ապրիլի 7-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում ՀՀ էներգետիկայի նախարարությունը ներկայացրեց իր դրական եզրակացությունը ծրագրի վերաբերյալ, որի արդյունքում որոշում կայացվեց հանձնարարել ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորության շրջանակներում աջակցել "Իդիլ-Տեքստիլ" ՍՊԸ-ին:

Ներկայում շարունակվում է ընկերությանը 200 հազ. ԱՄՆ դոլար վարկային միջոցների տրամադրման գործընթացը:

### 18. «Հագենաս» ՍՊԸ. «Սննդային հավելանյութերի արդյունաբերության ընդարձակման ծրագիր»

Ընկերությունը հիմնադրվել է 1999թ. Խաչիկ Գևորգյանի կողմից, որը ներկայում ղեկավարում է «Հագենաս» ՍՊԸ-ն: Ընկերության արտադրական պորտֆոլիոն ընդգրկում է բարձրորակ բնական յուղերի, էքստրակտների և սննդային հավելանյութերի լայն տեսականի: Դրանք մշակվել և մշակվում են ընկերության հմուտ մասնագետների կողմից, որոնք միախառնում են գիտական նոու-հաուն, ավանդական գիտելիքներն ու Հայաստանի հողի բնական առավելությունները: «Ապրիկոտաբսի» արտադրական գործընթացն ու նոու-հաուն պատենտավորված է Եվրասիական Պատենտի (Eurasian Patent) կողմից: Արտադրական ողջ պորտֆոլիոն հաստատված և վավերացված է հետևյալ հաստատությունների կողմից՝

- ՀՀ առողջապահության նախարարության դեղորայքի և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
- Փորձագիտական-վերլուծական ExLab, Հայաստանի Հանրապետություն

- Եվրասիական Պատենտ
- Վրաստանի աշատանքի, առողջապահության և սոցիալական գործերով նախարարություն
- Ռուսաստանի հակադոպինգային կենտրոն
- «Էքսիմթեսթ» ոչ-առևտրային հավաստագրման ընկերություն, Ռուսաստան
- ԱՄՆ Սննդի և դեղորայքի ադմինիստրացիա:
- Արտադրանքի արտադրությունն իրականացվում է ածխածնի գազի (CO2) գերկրիտիկական էքստրակցիայի մեթոդի կիրառմամբ, որը բացառում է հումքի և նախնական արտադրանքի մշակումը բարձր ջերմաստիճանում և ֆենոլային միացությունների դեգրադացումը: 2009թ. նախատեսվող շինարարարական աշխատանքների մեկնարկի դեպքում արտադրական նոր բազան շահագործման կհանձնվի արդեն 2012թ. սկզբին:

Ակնկալվող աջակցությունը կազմում է 13.1 մլն ԱՄՆ դոլար, որի ետգնման ժամկետը կազմում է 5-7 տարի: Ընկերությունը նախատեսում է թափանցել արտասահմանյան շուկաներ, մասնավորապես ԱՄՆ, Կանադա, Արևելյան Եվրոպա և ԱՊՀ երկրներ: Նախատեսվում է արտադրական համալիր կառուցել ՀայաստանիԱրարատյան դաշտի էկոլոգիապես մաքուր գոտիներում՝ տարեկան 120 մլն միավոր արտադրողականությամբ: Նախագիծը ենթադրում է բնական հավելանյութերի և էքստրակտների արտադրությունը կազմակերպել ավելի ժամանակակից ձևերով՝ գելեր, քսուքներ, մոմիկներ, դեղապատիճներ և դեղահաբեր: Արտասահմանյան շուկաներում ընկերությունն իր արտադրանքը դիրքավորելու է ցածր գնային հատվածում՝ հատուկ շեշտադրում կատարելով պրոգրեսիվ տեխնոլոգիաների և արտադրանքի բարձր որակի վրա: Ընկերության բազային արտադրական հզորությունը կկազմի տարեկան 120 մլն միավոր: Աջակցության դեպքում ընկերության աշխատողների թիվը կհասնի 100-ի և մոտ 500 գյուղացիական տնտեսություն կներգրավվի հումքի մատակարարման աշխատանքներին: Ընկերության արտադրական հզորությունների փոքր լինելու պատճառով 2008թ.-ի ընթացքում ընկերությունը կարողացել է իր առավելագույն հզորություններով 180 000 ԱՄՆ դոլարի ապրանք արտադրել և իրացնել՝ մեծամասամբ արտահանելով ԱՄՆ: Ներկայիս աշխատողների թիվը քիչ է մոտ 10 հոգի, սակայն ընկերությունը սեզոնային համագործակցում է մոտ 200 գյուղացիական տնտեսությունների հետ: Ընկերությունը բիզնես ծրագրի հետ միասին ներկայացրել է պայմանագրեր AKAM ընկերության հետ, որն իրականացնում է դեղագործական շենքերի կառուցում, ինչպես նաև ամերիկյան

SKYPARKPHARMACY ընկերության հետ 2,5 մլն ԱՄՆ դոլարի ընկերության արտադրանք ձեռք բերելու համար

Սույն թվականի մարտի 25-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում արձանագրվեց, որ ՀՀ կառավարությունը պատրաստ է քննարկելու ընկերությանը ոչ ֆինանսական բնույթի աջակցություն ցուցաբերելու հարցը:

### 19. «Սամէլոն» ՍՊԸ. «Չիչխանի վերամշակման արտադրական ծրագիր»

(Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, տնօրեն Սամվել Մադոյան) Շուկայի պահանջները հաշվի առնելով՝ ընկերությունը բուժիչ հատկությունների ապահովման համար, արտադրատեսակների բաղադրությամ մեջ շաքարի փոխարեն կօգտագործի բնական մեղր: Նախատեսված ամսական միջինը արտադրել 1 տոննա թանձրուկ, 1 տոննա ջեմ, 1000 լիտր հյութ, 3000 լիտր գինի և 100 լիտր յուղ: 2009թ.-ի ընթացքում նախատեսվում է, որպես հումք օգտագործել 2008թ.-ին հավաքված, մշակված և պահեստավորված հումքը, իսկ ֆինանսական ներդրման շնորհիվ արտադրության կազմակերպման արդյունքում կարելի է ակնկալել յուրաքանչյուր ամիս արտադրության աճ 10-15%: Ծրագրով նախատեսվում է զարգացնել չիչխանի վերամշակման և տարբեր արտադրատեսաների՝ ջեմի, հյութի, թանձրուկի, գինու և յուղի արտադրության ավելացում և իրացում: 2008թ.-ի հուլիս ամսին գյուղատնտեսության աջակցության ԾԻԳ-ը տրամադրեց 30 մլն դրամ ծրագրի համար «Արցախբանկ»-ի միջոցով: Սակայն վարկի տրամադրումը տարբեր պատճառներով ձգձգվեց, իսկ հետո գրավ չապահովելու պատճառով ֆինանսավորումը տեղի չունեցավ, որի պատճառով արտադրությունը ժամանակավոր դադարեցվել է և մնացել է 15 մլն դրամ արժողությամբ կիսաֆաբրիկատ հումքը: Ծրագրի 50մլն դրամից 20 մլն դրամը ներդրվել է ընկերության կողմից, իսկ մնացած 30 մլն ակնկալվում պետության կողմից որպես ներդրում, երկարաժամկետ վարկի (5 տարի, մարումները սկսած 2-րդ տարուց, առկա են 8.5 մլն ՀՀ դրամի գրավի միջոցներ) կամ դրամաշնորհի տեսքով, որն ուղղվելու է արտադրական շենքի վերանորոգման, անհրաժեշտ սարքավորումների, տրանսպորտային միջոցների և այլ ծախսերի վրա: Առաջին ծրագրային տարում նախատեսվում է ստանալ 20 մլն ՀՀ դրամի հասույթ: Արտադրության համար անհրաժեշտ սարքավորումները առկա են՝ բացառությամբ լցման սարքից, որն անհրաժեշտ է ձեռք բերել: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի 30-ից ավել բարձր աշխատավարձով հիմնական աշխատողների և 150-200 հոգի սեզոնային օրավարձով աշխատատեղեր: Ներկայումս նման արտադրատեսակի գծով ընկերությունը Հայաստանում չունի մրցակիցներ: Ըստ ընկերության

ներկայացված բիզնես ծրագրի սպասված շահութաբերությունը կազմում է իրացման արժեքի 20-25%-ը: Ընկերության մշակված ռազմավարությամբ նախատեսվում է տեղ գրավել մրգերի պահածոների հայկական շուկայում չիչխանի ապրանքատեսաների գծով, ստեղծել դիտրիբյուտորական ցանց, դուրս գալ միջազգային շուկա: Ընկերությունը նախատեսում է գները Ընկերությունը վարձակալական հիմունքներով զբաղեցնում է Վարդենիս քաղաքի նախկին հայգորգի մասնաճյուղի շենքը: Նախատեսվում է նաև կապիտալ ներդրումներ կատարել Երևանում և Վարդենիսում առևտրային ցանցը մեծացնելու համար

Սույն թվականի մարտի 25-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին ուսումնասիրել ներկայացված ծրագիրը և հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել «Սամէլոն» ՍՊԸ-ին վարկավորման և կապիտալում մասնակցության տարբերակներով:

Ներկայումս ընթանում է ծրագրին օժանդակություն տրամադրելու ավարտական փուլը:

## 20. «Ինսի-ՆԿՏ» ՍՊԸ. «Բուժիչ և կոսմետիկ միջոցների արտադրության ընդլայնման ծրագիր»

(Երևան, Տնօրեն Զարուհի Անդրիասյան, արտադրական տարածքը գտնվում է Լոռու մարզում, գ. Հորբարձի) Ընկերությունը հիմնադրվել է 2006թ.-ին և իրականացնում է բուժիչ կասմետիկ միջոցների և այլ նյութերի արտադրություն և վաճառք: Ներկայումս ընկերությունը ունի 18 աշխատող, որից 7-ը ներգրավված են ադմինիստրատիվ աշխատակազմում, մնացած 11-ը՝ արտադրականում: ԻՆՍԻ-ՆՏԿ ՍՊԸ-ն հիմնադրվել է “Նորագույն Տեխնոլոգիաների Կենտրոն” գիտահետազոտական ՀԿ բազայի հիման վրա, որը գործում է 1998թ.՝ հետազոտում և մշակում է բուժիչ միջոցներ և նյութեր եթերային յուղերի հիման վրա: Ընկերության կողմից առաջարկվող ողջ տեսականին արտադրված է Նորագույն Տեխնոլոգիաների Կենտրոնի կողմից մշակված նոր տեխնոլոգիայով, էկոլոգիապես մաքուր նյութերից: Ընկերության արտադրանքի հիմնական տարրը և գաղտնիքը եթերային յուղերն են, որոնք ստացվում են Լոռվա լեռնաշխարհի էկոլոգիապես մաքուր բուսատեսակներից: Ընկերությունը ներկայումս սպառողին առաջարկում է 3 տեսականի INSI ապրանքանիշի ներքո՝ անտիակնե, անտիպրեսպիրանտ և անտիպիգմենտ և 3 տեսականի հակասանկային խանավ անձեռացիկներ՝մարմնի,ոտքերի,ձեռքերի: Մոտ ապագայում հայ սպառողի դատին

կհանձնվի ևս մի շարք նոր արտադրատեսակներ: Ընկերությունը սկսել է նոր արտադրամասի (745 քմ.) շինարարության աշխատանքներ, որը գտնվում է նույն տարածքում: Նախնական գնահատմամբ շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է 380, 000 USD-ին համարժեք դրամ, ինչի կկազմի ընդհանուր ծրագրիր 82%-ը: Նոր արտադրամասը կառուցվելու է GMP-ի համակարգի ստանդարտներին համապատասխան: Ընկերության վերականգնող բուժիչ տոնիկների շարքը անցել են համապատասխան ՀՀ և ՌԴ փորձարկման և սերտիֆիկացման մարմինները: Արտադրական ողջ ցիկլը կատարվում է տեղում, ոչ մի հումք չի ներմուծվում: Բանկերի հետ չեն համագործակցում բարձր տոկոսադրույքի, վարկի տրամադրման կարճաժամկետության և գրավադրվող անհրաժեշտ գույքի բացակայության պատճառով: Իրացումը կազմակերպվում է ՀՀ և ՌԴ դեղատնային ցանցերի միջոցով: Ընկերության ներդրումային ծրագրի արժեքը կազմում է 156,400 հազ. դրամ, որից 83%-ը կուղղվի նոր արտադրամասի շինարարական աշխատանքները ավարտին հասցնելուն, 13%-ը արտադրամասը զինելուն և 4%-ը եվրոպական երկրներ արտահանման համար ստանդարտների ներդրման և սերտիֆիկացման ծախսերի իրականացմանը: Անհրաժեշտ ֆինանսական միջոցները սարքավորումների ձեռք բերման համար նախատեսվում է ներգրավել վարկի տեսքով, անհրաժեշտ միջոցների 5%-ը կներդրվեն հիմնադիրների կողմից: Նախագծի իրականացման համար ընկերությանը անհրաժեշտ է ներգրավել ֆինանսական միջոցներ 380,000 USD-ի չափով նոր արտադրամասի շինարարական աշխատանքների իրականացման համար: Ներդրումային ծրագրի արդյունքում ընկերության գործունեության ահութաբերությունը կաճի 3%-ից մինչև 39%՝ շնորհիվ արտադրական հզորությունների լրիվ օգտագործման: Ըստ ընկերության կանխատեսումների ներդրումների փոխհատուցման ժամկետը կազմում է 6 տարի: Ներկայումս ընկերության արտադրանքը իրացվում է ՀՀ մեծածախ դեղատնային ցանցերում, ինչպես նաև ՌԴ ‘’Դոկտոր Ստոլետով” դեղատնային համակարգում,որտեղ ապրանքի որակը լիովին վերահսկելի է: Ընկերությունը մասնակցել է մի շարք ցուցահանդեսների եվրոպական երկրներում, որտեղ ընկերության տեսականին մեծ հետաքրքրություն է առաջացրել: Փորձնական նմուշներ են ուղարկվել նաև Վրաստան,Ուկրաինա,Կազախստան,ԱՄՆ և Գերմանիա , որտեղից ևս ստացվել են դրական արձագանքներ: Այնուամենայնիվ եվրոպական շուկաներ մուտք գործելու համար ընկերությունը պետք է իրականացնի մի շարք քայլեր՝ ուղղված արտադրության վերազինմանը և արտադրական գործընթացի կազմակերպմանը (մասնավորապես GMP ստանդարտի) ներդրման ուղղությամբ: Ներքին շուկայում վաճառքների ծավալների աճ ապահովելու համար ընկերությունը

որոշել է կիրառել տեղաբաշխման նոր քաղաքականություն՝ ուղղակի վաճառքների միջոցով (այսինքն ընկերության արտադրանքը կիրացվի ոչ միայն դեղատների միջոցով, ԻՆՍԻ-ՆՏԿ-ն կստեղծի իր "խորհրդատու-վաճառողների" ցանցը ողջ ՀՀ-ով, որոնք կիրականացնեն անմիջական խորհրդատվություն և վաճառք սպառողներին): Ներդրումային ծրագրի արդյունքնում ընկերությունը կներգրավի 4 ուղղակի աշխատակից, և մոտ 50 անուղղակի աշխատակիցներ (խորհրդատու վաճառողներ) ք.Երևանում և ՀՀ մարզերում:

Սույն թվականի մարտի 25-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին ուսումնասիրել ներկայացված ծրագիրը և հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել «Ինսի-ՆԿՏ» ՍՊԸ-ին վարկավորման կամ կապիտալում մասնակցության տարբերակներով:

Ներկայումս ընթանում է ծրագրին աջակցություն տրամդրելու ավարտական փուլը:

## 21. «Իշխան» ՍՊԸ. «Պահածոների արտադրության ընդլայնման ներդրումային ծրագիր»

"Իշխան" ՍՊԸ-ն գրանցվել ու գործում է 1995 թ.-ից Արագածոտնի մարզի Կարբի գյուղում, սակայն իր գործունեությունը սկսել է 1990թ-ից՝ որպես արտադրական կոոպերատիվ: "Իշխան" ՍՊԸ-ի հիմնական սեփականատերերն են համահիմնադիրներ Վահրամ Մուրադյան և Արարատ Ավետիսյանը: "Իշխան" ՍՊԸ-ն գործարկում է պահածոների գործարան, որն առայժմ միջազգային (շուտով՝ նաև հայկական շուկաների) համար արտադրում է մուրաբաներ, ջեմեր, խտանյութեր, օշարակներ, կոմպոտներ և այլ արտադրատեսակներ: Ընկերության արտադրանքը Ամերիկայում, Մերձավոր Արևելքում, Ուկրաինայում ու ՌԴ շուկաներում իր որակով և գնով արդեն զբաղեցնում է բարձր դիրքեր: "Իշխան" ՍՊԸ-ի արտադրանքների հիմնական բնորոշիչներն են "բնական" լինելը և "ընտանեկան" բաղադրատոմսով պատրաստման տեխնոլոգիան: Ընկերությունը Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում և ԱՄՆ-ում գրանցել է "Զոդիակ Ֆուդս" ("Zodiac Foods") ապրանքանիշը, որը պաշտպանված է նշված երկրներում: "Իշխան" ՍՊԸ-ն համագործակցում է տարբեր երկրներում գործող 8 առևտրային ցանցերի հետ, սակայն նախատեսվում է մեծացնել դրանց թիվը՝ հասցնելով 15-ի, որոնց կսպասարկեն Ընկերության հինգ ներկայացուցչություններ համապատասխան երկրներում: Այսօր "Իշխան" ՍՊԸ-ն ունի արտադրության լիարժեք երկու հոսքագիծ՝ մրգերի ու հատապտուղների վերամշակման, սակայն 2010 թ-ից նախատեսվում է սկիզբ դնել նաև բանջարեղենի վերամշակմանը: Ընկերությունը նախատեսում է ընդլայնել վաճառքի ծավալները 2-3 անգամ՝ դուրս գալով Արաբական

Էմիրությունների և Իսրայելի շուկաներ: 2009թ-ին Ընկերությունը նախատեսում է արտադրել 850950 տարա պահածո: Այս քանակը Ընկերությունը կարողանում է արտադրել այժմյան արտադրական հզորությունների դեպքում՝ երկու հերթափոխով: Արտադրական գործընթացը տևում է 5-6 ամիս, որից երեքը առավել ծանրաբեռնվածությամբ: Ընկերությունը ակնկալում է 207 400 000 դրամի կապիտալի մեջ մասնակցությունը, ինչը կապահովի կապիտալի պահանջ 25 տոկոսի չափով: Ներդրումների ետվերադարձի ժամկետը կազմում է մոտ 35 ամիս: Այսօր ընկերությունում աշխատում են 32 աշխատակից, որոնցից 26-ը՝ ընդգրկված են արտադրական պրոցեսում: Արտադրության ծավալների աճի դեպքում 2013թ-ին արդեն Ընկերությունը նախատեսում է հիմնական աշխատակիցների թիվը մոտ 4 անգամ ավելացնել՝ հասցնելով 120-ի: Այսօր Ընկերությունը իր ամբողջ արտադրանքը արտահանում է հիմնականում ԱՄՆ, ՌԴ, Ուկրաինա և Մերձավոր Արևելք: Դրան մեծապես նպաստում են "Իշխան" ՍՊԸ-ի ներկայացուցչությունները ՌԴ-ում՝ Սարատով քաղաքում, ԱՄՆ-ում՝ Դալլաս քաղաքում, Ուկրաինայում՝ Գորլովկա քաղաքում: Շուկաների ընդլայնման նպատակով արդեն պայմանագիր է կնքվել Արաբական Էմիրություններում ներկայացուցչություն բացելու վերաբերյալ: ՌԴ-ում միայն անցած տասնութ ամիսների ընթացքում Ընկերությունը իրացրել է ավելի քան 250,000 միավոր մուրաբա, Ուկրայինայում՝ ներկայացուցչության միջոցով ավելի քան 270,000 և մնացած շուկաներում ավելի քան 500,000 միավորի /կամ էկվիվալենտ քաշի/ մուրաբաների, ջեմերի և մրգային լցոնների իրացում: Ընկերության արտադրանքները ունեն շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ թույլտվություններ ու սերտիֆիկատներ. 1.ԱՄՆ-ում մի քանի սերտիֆիկատ ունեն արտադրանքները. FDA-Food&Drug administration, Հակաբիոլոգիական ահաբեկչության դեմ պայքարի կոմիտեի կողմից, Kashruth Certificate, 2. ՌԴ-ում՝ ГОСТ և այլն /Ներդրումային ծրագրին կցվում են սերտիֆիկատների պատճենները/ 3.Ուկրայինայում տեղական համապատասխան որակի սերտիֆիկատներ:

Սույն թվականի փետրվարի 6-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին բանակցել «Իշխան» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ կանոնադրական կապիտալում պետության մասնակցության մեխանիզմների հարցի շուրջ:

Ներկայումս ծրագրին օժանդակելու գործընթացն ավարտական փուլում է:

22. **«Դաստակերտի բուժ տեխնիկայի գործարան» ԲԲԸ. «Պաշտպանիչ ակնոցների արտադրություն հիմնելու ներդրումային ծրագիր»**

՛Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան՝ ԲԲԸ-ն հիմնադրվել է 1976 թ-ին: Ընկերությունը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում, Շիրակի 12 հասցեով: Կազմակերպությունը իրականացնում է պաշտպանիչ ակնոցների 15 տեսակների, վահանակների, բժշկական երկարատև ներարկման կանգնակների, ատամնաբուժական սեղանիկների, լաբորատոր կանգնակների, բժշկական պահարանների, գյուղատնտեսական տեխնիկայի պահեստամասերի, ՀԵԿ-երի հիդրոտուրբինի փողորակի արտադրություն, ինչպես նաև նախագծվել է և արտադրական փուլում է քարերի մշակման հաստոցների արտադրությունը: Ընկերության գլխավոր բաժնետերն է հանդիսանում Գագիկ Հովհաննիսյանը՝ 79,5 տոկոս բաժնեմասով, մնացած 20.5 տոկոսը բաշխված է 25 մասնակիցների միջև: Ընկերությունը ներկայումս ունի 12 աշխատող, որոնցից 7-ը ներգրավված են բուն արտադրամասի աշխատանքներում, իսկ 5-ը ՝ ադմինիստրատիվ: Ընկերությունը գործում է դեռևս խորհրդային ժամանակաշրջանից, վերջին տարում նախորդ տարվա համեմատ ընկերության զուտ շահույթը աճել է 104,000-ով՝ կազմելով 432,000 ՀՀ դրամ: Գործարար ծրագրի նպատակն է վերսկսել պաշտպանիչ ակնոցների արտադրությունը ՛Դաստակերտի բուժ տեխնիկայի գործարան՝ ԲԲ Ընկերությունում, արդիականացնել առկա արտադրանքը, և ավելացնել արտահանվող արտադրանքի ծավալները: ՛Դաստակերտի բուժ տեխնիկա՝ ԲԲԸ-ն արտադրանքի արտադրության ներդրումային ծրագրի արժեքը կազմում է մոտ 145,000,000 դրամ, որից 112,000,000 դրամը կներգրավվի հիմնական միջոցների ձեռք բերմանը, 13,980,000 կուղղվեն ընթացիկ և նախագործառնական ծախսերին, իսկ 17,000,000 դրամը՝ շրջանառու կապիտալին: Ներկայումս Ընկերությունը ունի 40,488,000 դրամի հիմնական միջոց, որից 33,632,000 կազմում են շենքերը, 2,547,000 դրամի տրանսպորտային միջոցները, 850,000 դրամի արտադրական գույքը և 3,459,000 դրամի մեքենա սարքավորումները: Արտադրության ընդլայնումը կավելացնի աշխատատեղերը ավելի քան 4 անգամ: Դաստակերտի բուժտեխնիկայի գործարանն այսօր նախատեսում է իրացնել հիմնական արտադրատեսակներ՝ պաշտպանիչ ակնոցներ և հիդրոտուրբինի ճնշումային փողորակներ, որոնց համար ունի պայմանագրեր, նախատեսվում է նաև շուկայահանել նախկին տարվա արտադրանքի մի մասը: Ընկերության հիմնական թիրախային շուկան հանդիսանում է Ռուսաստանը, որտեղ և նախատեսում է արտահանել իր արտադրանքը՝պաշտպանիչ ակնոցները, ներքին շուկայում իրացվելու են մնացած արտադրատեսակները: Ներկայումս Ընկերությունը ունի պաշտպանիչ ակնոցների արտահանման պայմանագիր Ռուսաստանի Դաշնության հետ, շարունակական պայմանագիր հիդրոտուրբինի փողորակի արտադրության հետ, ինչպես նաև պայմանավորվածության փուլում է գտնվում Ուզբեկստան արտադրանքի արտահանման գործընթացը:

Սույն թվականի փետրվարի 6-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին «Դաստակերտի բուժ. տեխնիկայի գործարան» ԲԲԸ-ի

գործունեությանը խթանելու նպատակով ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցների հաշվին հնարավորության սահմաններում ցուցաբերել փուլային աջակցություն:

Ներկայումս ծրագրին օժանդակելու գործընթացն ավարտական փուլում է:

### 23. «Մարկետինգ ընդ մենեջմենթ 360» ՍՊԸ. Պոլիմեր-ավազային կղմինդրների և երեսպատման սալիկների արտադրություն

Ընկերությունը ստեղծվել է 2003թ.-ին: Գործունեության 5 տարիների ընթացքում կատարվել է շուրջ 40 մլն դրամի ներդրում: Նորագույն տեխնոլոգիաների (recycling) կիրառմամբ արտադրում է կղմինդրներ, երեսպատման սալիկներ և այլ շինարարության և կենցաղի մեջ օգտագործվող ապրանքներ: Արտադրությունը կազմակերպվում է պոլիմեր-ավազային տեխնոլոգիայով, որն համարվում է էկոլոգիապես մաքուր, քանի որ օգտագործվում են պլաստմասե իրերն ու շշերը: Ի տարբերություն մետաղի և այլ նյութերից պատրաստված կղմինդրների տվյալ տեսակի արտադրանքը թեթև է, երկարակյաց, արտակարգ դիմակայուն արևի ճառագայթներին և ագռեսիվ միջոցներին, ունի բարձր ջերմադիմացկունություն, ձայնամեկուսիչ է և մոբիլ: Կղմինդրները օգտագործվում են, որպես տանիքների ծածկ, իսկ երեսպատման սալիկները, որոնք ունեն աղյուսային տեքստուրա, կարող են օգտագործվել բարձրաճաշակ քոթեջների պատերի վրա, նախապես ամրանալով ֆաներային, իսկ այնուհետև քոթեջի թիթեղյա կմախքին: Սա էլ ապահովում է մոբիլությունը, քանի որ այս դեպքում հնարավորություն է ընձեռվում քոթեջը հեշտությամբ տեղափոխելու: Կազմակերպությունը դիմել է “Enterprise Europe Network”-ին և մասնակցել Նիդեռլանդների կառավարության հովանավորության ծրագրին (զարգացող երկներում բիզնեսի աջակցություն): Ընկերությունը անցել է բոլոր փուլերը և ստացել հավանություն 5000 ԵՎՐՈ-ին համարժեք վաուչերի տեսքով, ինչը հնարավորություն է տալիս նշված գումարի չափով Հոլանդիայում գտնել գործընկեր և ստանալ խորհրդատվական ծառայություններ: Ընկերության արտադրանքով հետաքրքրվել են նաև Հոլանդիայի կամուրջներ և ամբարտակներ կառուցող ընկերությունները, ինչպես նաև Վրաստանի որոշ շինարարական ընկերություններ: Ընկերությունը ունի գրանցված ապրանքանշաններ «Կղմինդր360», «Երեսպատման Սալիկ 360», «Կոտեջ360»: Այսօր արտադրվում է միայն կղմինդր: Երեսպատման սալիկները ու պուրակային ծաղկամանները դեռևս գտնվում են մշակման փուլում: Պահանջվում է 29մլն դրամի աջակցություն (12 մլն դրամ դրամաշնորհ և 17մլն դրամ ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկ)

տեխնիկական բազան համալրելու, արտադրողականությունը բարձրացնելու, տեսականին մեծացնելու, մարքեթինգային միջոցառումների անցկացնելու համար:

Սույն թվականի հունվարի 9-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորության շրջանակներում աջակցել «Մարկետինգ ընդ մենեջմենթ 360» ՍՊԸ-ին:

Ներկայումս ընկերությանը ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից արդեն իսկ տրամադրվել է 50 մլն.դրամի աջակցություն կանոնադրական կապիտալում մասնակցության տեսքով

24. **Հերգնյան եղբայրներ» ՍՊԸ. «Տրիկոտաժի արտադրության և իրացման ծավալների ընդլայնում»**

(ք. Գավառ, տնօրեն՝ Միեր Հերգնյան) Ընկերությունը գործում է 2004թ.-ից և ունի 10 աշխատող: Զբաղված են տրիկոտաժի արտադրությամբ՝ տարեկան իրացնելով մոտ 2-4 մլն դրամի: Առևտուրն իրականացվում է առանց միջնորդների շրջիկ առևտրի միջոցով հատուկ կահավորած մեքենաներով շուրջ ՀՀ 20 քաղաքներում: Գործունեությունը ծավալվում է պետական ստանդարտներին համապատասխան: Ընկերությունը ակնկալում 15մլն. դրամի ցածր տոկոսադրույքով վարկային միջոցների ներգրավում, որի արդյունքում պարտավորվում է կրկնապատկել իրացման ծավալները, ստեղծել 15 նոր աշխատատեղ և մեծացնել իրացման ցանցը:

Սույն թվականի հունվարի 23-ին կայացած Օպերատիվ շտաբի նիստում հանձնարարվել էր ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորության շրջանակներում աջակցել Հերգնյան եղբայրներ» ՍՊԸ-ին:

Ներկայումս ընկերությանը ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից արդեն իսկ տրամադրվել է 12 մլն.դրամի աջակցություն վարկավորման տեսքով:

Բացի վերոնշյալ ծրագրերից, Աշխատանքային խմբում կայացած քննարկումների արդյունքում ՓՄՁ ԶԱԿ են վերահասցեագրվել 16 գործարար ծրագրեր, որոնց աջակցություն տրամադրելու հարցն ընթացքի մեջ է: